ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

22.01.2014 թվականի N.04-Ա

<<Գետիկ Մայնինգ Քոմփանի>> ՍՊԸ-ին տրամադրված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գետիկ գետի միջին հոսանքի <<Ամրոցի>> ոսկու և <<Այգուտի>> պղնձի հանքերևակումների երկրաբանական ուսումնասիրության 22.05.2012թ. թիվ ԵՀԹՎ-29/034 /նախկին թիվ 85/ և ԵՀԹՎ-29/035 /նախկին թիվ 86/ թույլտվությունների ժամկետները երկարաձգելու դիմումի վերաբերյալ.

Քննության առնելով <<Գետիկ Մայնինգ Քոմփանի>> ՍՊԸ-ին /այսուհետ՝ ընկերություն/ տրամադրված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գետիկ գետի միջին հոսանքի <<Ամրոցի>> ոսկու և <<Այգուտի>> պղնձի հանքերևակումների երկրաբանական ուսումնասիրության 22.05.2012թ. թիվ ԵՀԹՎ-29/034 /նախկին թիվ 85/ և ԵՀԹՎ-29/035 /նախկին թիվ 86/ թույլտվությունների ժամկետները 2 տարով երկարաձգելու վերաբերյալ ընկերության 06.12.2013թ. թիվ G-28/128 դիմումը և համադրելով դրանք ընկերության և լիազոր մարմնի միջև կնքված 06.11.2012թ. թիվ ՊՎ-034 և թիվ ՊՎ-035 պայմանագրերի պահանջների հետ պարզվել է, որ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի /33 թերթ/ համաձայն ընկերությունը չի ապահովել վերը նշված պայմանագրերի համապատասխան ժամանակացույցերով նախատեսված աշխատանքների մի մասի կատարումը:

Մասնավորապես՝ չեն կատարվել երկրաֆիզիկական հանույթի և ինկլինոմետրիայի աշխատանքներն ընդհանրապես և չի իրականացվել սյունակային հորատման ծավալների մոտ 90 տոկոսը, ինչն արդեն հանգեցրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների ժամանակին չկատարման՝ բերելով /ժամանակացույցով նախատեսված/ պայմանագրային պարտավորությունների խախտման: Հետևաբար, առկա է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքը՝ ընկերությանը տրամադրված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունների գործողության ժամկետը չերկարաձգելու համար, քանի որ ընդերքօգտագործման իրավունքի խնդրարկվող երկարաձգումը պայմանավորված է ընկերության կողմից պայմանագրային պարտականությունների կատարման խախտմամբ:

Բացի այդ դիմումով խնդրարկվող թիվ ԵՀԹՎ-29/034 ուսումնասիրության թույլտվության /Ամրոցի տեղամաս/ ժամկետի երկարաձգման համար օրենսդրությամբ պահանջվող առանձնացված ոչ հեռանկարային տեղամասից /ոչ պակաս քան հատկացված տեղամասի կեսը/ հրաժարումը չի համապատասխանում ընկերության կողմից հրաժարված տարածքի օրենքով սահմանված չափաբաժնին, ինչը ևս համաձայն Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի, հիմք է թույլտվության գործողության ժամկետը չերկարաձգելու համար:

Դրանցից բացի <<Ամրոցի>> ոսկու ընկերության կողմից ներկայացված տեղամասի մակերեսը 2.2 կմ^2 չափով դուրս է նախկինում ընկերությանը տրամադրված տարածքից, ինչը պետք է դիտարկել ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասի ընդլայնում, որի համար ընկերությունը չի դիմել և չի ներկայացրել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 43-րդ հոդվածով պահանջվող փաստաթղթերը:

Այսպիսով, ղեկավարվելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, 6-րդ մասով, 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <<Գետիկ Մայնինգ Քոմփանի>> ՍՊԸ-ին տրամադրված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գետիկ գետի միջին հոսանքի ավազանի <<Ամրոցի>> ոսկու և <<Այգուտի>> պղնձի հանքերևակումների երկրաբանական ուսումնասիրության 22.05.2012թ. թիվ ԵՀԹՎ-29/034 /նախկին թիվ 85/ և թիվ ԵՀԹՎ-29/035 /նախկին թիվ 86/ թույլտվությունների ժամկետները 2 տարով երկարաձգելու դիմումը մերժել:

2. Սահմանել, որ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 22.05.2012թ. թիվ ԵՀԹՎ-29/034 /նախկին թիվ 85/ և թիվ ԵՀԹՎ-29/035 /նախկին թիվ 86/ թույլտվությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության 06.11.2012թ. թիվ ՊՎ-034 և թիվ ՊՎ-035 ընդերքօգտագործման պայմանագրերի գործողության ժամկետների ավարտմամբ 10.12.2013թ. դադարեցված է<<Գետիկ Մայնինգ Քոմփանի>> ՍՊԸ-ին տրամադրված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գետիկ գետի միջին հոսանքի ավազանի <Ամրոցի> ոսկու և <Այգուտի> պղնձի հանքերևակումներում ընդերքօգտագործման իրավունքը և լուծված՝ <<Գետիկ Մայնինգ Քոմփանի>> ՍՊԸ-ի հետ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության 06.11.2012թ. թիվ ՊՎ-034 և թիվ ՊՎ-035 ընդերքօգտագործման պայմանագրերը:

3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում կամ դատական՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

4.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ